ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2025 թվականի N 866-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1989-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» և «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, գույք հետ վերցնելու և ամրացնելու, «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի

նոյեմբերի 9-ի N 1791-Ն և 2005 թվականի հունիսի 29-ի N 1055-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1989-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը և որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետը «ծառայողների վերապատրաստումը,» բառերից հետո լրացնել «նախարարության քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստումը,» բառերով.

2) որոշման 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝

1) ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, հաստատել միաձուլման մասին պայմանագիրը և «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ու «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունների փոխանցման ակտերը.

2) ապահովել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը։».

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին կետով՝

«9.1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 9-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գործընթացի ավարտից հետո քառամսյա ժամկետում «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2012 թվականի օգոստոսի 8-ին կնքված N 93/0012 և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության «Ճգնաժամային կառավարման պետա-

կան ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2006 թվականի մարտի 22-ին կնքված N 4/006 պայմանագրերում սույն որոշումից բխող պայմանագրերի փոփոխման մասին համաձայնագրեր (այսուհետ՝ համաձայնագրեր): Համաձայնագրերի նոտարական վավերացման և համաձայնագրերից ծագող գույքային իրավունքների գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:».

4) որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1. Կրթահամալիրը ստեղծվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (գրանցման ամսաթիվն ու համարը՝ 15.09.2009 թ., N 290.210.03884) և «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (գրանցման ամսաթիվն ու համարը՝ 14.07.2003 թ., N 286.210.05045) միաձուլման արդյունքում և հանդիսանում է դրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:»,

բ. 20-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) վեց անդամներին նշանակում է նախարարը, որոնց թվում կարող են նշանակվել նախարարը, նրա տեղակալները, նախարարությանը ենթակա մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, նախարարության վարչությունների պետերը կամ նախարարության գլխավոր քարտուղարը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչը (համաձայնությամբ):»,

գ. 45-րդ կետի 2-րդ նախադասությունը հանել,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.1-ին կետով՝

«52.1. Կրթահամալիրի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է: Կրթահամալիրի կառավարման խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատը քննարկում է կրթահամալիրի գործունեության ոլորտներին վերաբերող հարցեր, այդ թվում՝ կառավարման խորհրդի և

գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքը: Ռեկտորատի գործունեության կարգը և ռեկտորատի կազմը հաստատում է կրթահամալիրի ռեկտորը:»,

ե. 81-րդ կետում «մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե» բառերը փոխարինել «դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Պետական գույքի կառավարման կոմիտեի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունների և լրացումների գրանցումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ